Գերապատիւ և Գերամեծար Տեառն Տեառն Ստեփաննոս Աբրայի
և վարդապետի կարօտիւ սիրոյ ողջոյն

... յետ հասանելոյ իմոյ այսր զկնի երկուց եօթնեկաց, էզուհալ եռու թագուհւոյն տեղեկացեալ բարւոք ելից և մտից տեղւոյս. և զայն էզուհալ գրել եռու տալեանեվարս. քանզի տեղեկացայ որ թագուհին յօժարութեամբ ընթեռնու զտալեանեվարն. և ախորժի և բարւոք հասկանայ։ Ես անձամբ կամեցայ տալ և ձեռամբ իմով ի ձեռս նորա անմիջապէս. բայց ոչ յաջողեցաւ, որովհետև յղի է և մերձ ի ծնանիլ. ուստի բարեկամի ձեռօք ի սենեակ նորա յղեցի, զոր ընթերցեալ թագուհին յետ երից եօթնեկաց առաքեաց զէզուհալս առ իշխանս և խորհրդականս մաճառիստանու։ Եւ ես տեղեկացեալ գտի զայն տեղին ուր պարտին խորհիլ և վճռել զիմ խնդիրս ըստ յանձնելոյ թագուհւոյն։ Եւ անդ հարցեալ գտի զի թարգմանելոյ տուեալ են զիմ մէմօռեալս կէռլացւոյ միում, որ անդ Գրագրութիւն առնէ հմուտ բազմաց լեզուաց։ Եւ ընդ սմա բարեկամացեալ իմ տեղեկացուցի նմա և յայտնեցի նմա զկամս իմ թէ կամիմք պաշվալովու տան մերում ի թագուհւոյն ևս հաստատութիւն առնուլ, և նա ուսոյց ինձ որ ինչ պէտքն էր և սկսայ քրտնաջան աշխատիլ... և յետ ոմանց աւուրց ել բանն ի վեր ի խորհրդոյ[1] թէ բարւոք է, կատարեմք զխնդիր ձեր։ Սոցա կամիլն միևնոյն է ընդ կամեցողութեան թագուհւոյն։... դատաւորք զայս ինձ հասկացուցին և ասացին չինել տալ և զայլ առզուհալ մի և տալ այնմ դատաւորի, որում անկանի այս պաշտօնս, որպէս զի ամենևին ազատ իցէ վանքն մեր յամենայնէ. և մի կարասցեն ժողովուրդք երկրին իւիք կերպիւ ծանրանալ ի վերայ նորա և կամ միննէթ ինչ առնել։ Եւ սորա զկնի այժմ ընթանամ. և յուսամ և զայս չնորհ ընդունիլ ի մօտ ժամանակի, ջնջել տալով յամենայն գրոց զտուրս տան մերոյ։ Եւ ապա վասն այսոցիկ երկուց պարգևաց տալոց են ինձ թուղթ մի կնքեալ ի թագուհւոյն վասն հաստատութեան տեղւոյն և վասն ազատութեան յամենայն ալքունի տրոց։...

յամի տեառն 1756 Ն. Ս. Հ. Գէորգ Վրդ.
Հոկտ. 23 ի Վիեննայ

ՄԱ.

Հ. Գէորգ կը շարունակէ լուրերը Աւստրօ-Գերման պատերազմին շուրջ։

Գերապատիւ և Գերամեծար Տեառն Տեառն Ստեփաննոս Աբրայի
և Վրդ.ի կարօտիւ սիրոյ ողջոյն

... Ցաւուրս Բանայիրի բերին աստ զայր մի յաղթանդամ և մեծահասակ, զորս տեսի ես աչօք, և մնացի հիացեալ և փոքր ինչ ևս զարհուրեալ. քանզի ըստ ծանրութեանն կշռեցին և էր 3 ղանդար և 50 ֆունթ. և ամօք է 19. ընդ մինաս վրդ.ին գնացի. որոյ բարձրութիւն է ըստ բարձրութեան Հ. Գրիգորին մերոյ. սա էանց ընդ բազկաւ նորա առանց խոնարհելոյ զգլուխն. մանաւանդ կայր տակաւին միջոց իբրու չորս մատն։ Ես ձգմամբ բազկիս ծայրիւն միջամատիս հազիւ հասի ի վերին ծագն հոտոտելեացն ուր միանան յօնք աչաց մարդոյ։ Սա օղլանդացի է, և յետ ոմանց շաբաթուց գալոց է ի Վենէտիկ։ Ջալատերազմէ այժմ լուութիւն է քանզի ձմեռն սաստկացաւ և թշնամին վտանկեցաւ. և յետս յետս չոգաւ անարգեալ։ Ցիրաւի զօրք մեր յաղթական եղեն միշտ. սակայն զբազում զօրս հանդերձ զօրաւորօք կորուսաք. անձինք մեծազգիք անկան և բազումք վիրաւորեցան. ոմանք ի Վիեննայ մեռան և թաղեցան և ոմանք ի ճանապարհի։ Վասն ամենեցուն սոցա զարմանալի հանդիսիւ և ջերմեռանդութեամբ և սնազգեցութեամբ

1. Այսինքն դատարանի խորհրդականներէն։